



ՄԱՀԿ

ԿԱՆԱՆՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԱՌՏԵԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ՆՈՐՈԹԹԻ
ՋԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ
ԿԱՆԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՐԵՐՈՒ



ԺԹ. ՏԱՐԻ

Նոր Շրջան, Թ/ւ 29



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԻՆ
ՕՐԻՈՐԴ ԶԱՊԷԼ ԶԱՔԱՐԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ԱԼԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ԵՒՏՈՒՄԻ ԽՈՒՆԿԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ԻՐԱՔԻՈՆ ՀԱՊԷՇԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ՄԱՌԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ՆԻՆԻ
ՕՐԻՈՐԴ ՄԱԹԷԼՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
ԵՎ
ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ

Գ/ն 40 փարա

Տպագրութիւն ԵԱՂԻԿ, Կալաթա.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 դրուշ. Վեցամսեայ 25՝ դրուշ.:

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 դրուշ. Վեցամսեայ 27 դրուշ.:

ՍՐՏԱՍԱՀՄԱՆՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան 12 ֆրանք:

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի դործառնութեանց համար զիմեւ մի՛ միայն՝

{زاغيك غزنهسى}

درعليه ده غلطه ده قورشونلى خاندە نومرو ۷

Շ Ա Ւ Թ Ա Թ Ե Ր Թ «Ծ Ա Ղ Ի Կ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրշուհլու խան, թիւ 7

JOURNAL "DZAGHIK,,

Constantinople, Galata, Kourchoum Han, N^o 7.

Վ Ա Ճ Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՍԵՂՆԱԳՐՈՒԹԻՔԵԱՆ ԵՒ ՕԺԻՏԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹՈՅ

ԺԱԼՃԵԱՆ ԵՒ ԹԱՎԺԱՆՃԵԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Կ. Պոլիս, Էսկի Զապթիէ հասէսի թիւ 63

Ապրանաց տեսակներու ճոխութեամբ ու չափաւոր գիներով ծախող հանրածանօթ այս հին Վաճառատունը Եւրոպական առաջնակարգ գործարանաց հետ միշտ ունեցած յարաբերութեանց շնորհիւ կը գտնուի պատրաստ հաւաքածոյ մը ասեղնագործութեան և օժիտի վերաբերեալ նոր ու ընտիր նիւթերու, ինչպէս մետաքսեայ կերպասներ, ամլազ, թաւիշ, թաւթա, ոսկեղօծ ու արծաթեայ զուտ ու անզուտ թելեր (խաս եւ խամ սրբմա), ճերմակեղէնի համար ընտիր պոստէներ, վալանօիէն ու մետաքսէ թանթէլաներ, ճերմակքրթան, դաղդիական ընտիր չապիկի կերպասներ, բիքէներ, գունաւոր պաթիսթներ եւայլն եւայլն:

Զեռագործ բանուած ու սկսուած զանազան ճոխ նիւթոց հաւաքածոյ մը պատրաստ կը գտնուի:

Կ. Պոլսոյ եւ Գաւառաց զպրոցական հաստատութեանց համար մասնաւոր զեղչ կ'ըլլայ:

Վաճառատան մէջ կը գտնուի միշտ պատրաստ ասեղնագործի գծագրիչ մը:

ՇԱՀԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

(613) ԺԸ, ՏԱՐԻ — ԹԻԻ 29

23 ՄԱՐՏ 1906

ԱՐՄԱՏԱՑԱԾ ԾՈՒՌ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ



ԱՐՅՈՒՑԷՅ հարուստի մը թէ ինչո՞ւ իր մանչ զաւակը
զպրօց կը զրկէ, ինչո՞ւ նախակրթութիւնով մը չու-
ղէր վերջակէտել սղուն դաստիարակութիւնը. ի՞նչ
հարկ բարձ. վարժարաններու համար ծախսուած
պատկառելի գումարներու են. : Ապահով, ձեզի պիտի պատասխա-
նէ ան թէ՛ «պէտք ունինք պահանջուած դոճողութիւնը ստանձնե-
լու մեր մանչ զաւակին հանգէպ տրուելիք դաստիարակութեան
համար, որպէս զի ան կարենայ պարկեշտօրէն մղել կեանքի պայ-
քարը, որպէս զի ան կարենայ ապրիլ բարոյական ու մտաւորա-
կան ճոխ կեանքով մը, մէկ խօսքով կարենայ ճանչնալ կեան-
քի ուղին ուրկէ պարտ է ընթանալ» : Երբ հարցուի այս վերջնօյն
թէ ինչո՞ւ համահաւասար դոճողութիւն մը չուղեր ստանձնել աղ-
ջիկ զաւակին հանգէպ, ո՞հ, առնելիք պատասխանմնիտ շատ տխուր
ու մռայլ պիտի ըլլայ, բայց ընդունուած ճշմարտութիւն մը ըլլալէ
չպիտի դադրի : Պիտի ըսէ տալանով, թէ «ի՞նչ հարկ նոյն զօրաւոր
ու տոկուն դաստիարակութիւնը տալ աղջիկ զաւակին, երբ ան չու-
կայ չպիտի երթայ, սուեւարական կեանքով չպիտի զբաղի, սոան

կառավարութիւնը, տան զբաղումը պիտի ճանչնայ միայն, զաւակները պիտի մեծցնէ, նոյն իսկ չպիտի դիւցնէ, քանի որ հարուստ է հետեւաբար պիտի բաւէ իրեն հասարակ ընթերցանութիւնը իւր լեզուին, հոգ չէ թէ քննչգիտնայ երկու տող իսկ գրեւ. քիչ մը ֆրանսերէն և յետոյ . . . յետոյ՝ զաշնակ, այս՝, զաշնակ, չէ՞ մի որ ան սղջկանս ամբողջ հրապոյրն ու արժանիքը պիտի կազմէ, չէ՞ մի որ անով պիտի վճռուի իր ապագայ բաղդը, չէ՞ մի որ մեր դրացիին աղջկիւր փայլուն ամուսնութիւն մը կնքեց, հրապուրելով խելացի, զիրքի ու աւուսան տէր երիտասարդ մը, իր նուազած հեշտաւոր Մոցարդով ու Վալնէրով. ինչ որ պէտք է մանչ զաւակիս և ինչ որ պէտք է աղջկանս, մենք գիտենք արդէն, այնքան տգէտ չենք, իբրեւ ճշմարիտ ծնողներ, մեր զաւակին ներկան՝ ու ապագան խորհող ծնողներ, կ'աշխատինք հոգալ իւրաքանչիւրին ֆիզիքական, մտաւորական ու բարոյական պէտքերը» :

Այս գաղափարով անած ու մեծցած՝ ծնողներ որքան շատ են մեր մէջ : Այս սխալ գաղափարով տողորուած մայրերն ու հայերը չե՞ն միթէ, որ կատարեալ խղճի հանգարտութիւն մը կը վայելեն, երբ աղջկիկին նախակրթարանը աւարտելէ վերջ, օտար վարժարան մը կը դրկեն, որպէս զի ան կարենայ նոյն լեզուով մէկ քանի կցկտուր խօսքեր կազմել, ու սորվիլ աղջկան մը փառքը անմահ հացնող զաշնակը, ու յետոյ, ալ ինչ հարկ սակայն, աղջկանը ապագային մտահոգութիւնը ունենալ : Ասանք չե՞ն միթէ վարգաշած օրիորդի մը արժանիքը յատկանշող գիտելիքները, ա՞ն չէ միթէ աղջկան բաղդն ոչ ապագան վճռող դատարարակութիւնը :

Ուրքան ցաւալի, նոյնքան ճշմարիտ ու սղբալի իրողութիւն մըն է թէ՛ մեր ծնողները երբ վերեւ յիշուած սխալ, վատթարացնող, իմաստասիր պատրաստող, լուրջ ու ջգուտ դատարարակութեան մը հանդամանքէն բոլորովին զերծ, մակերեսութային դատարարակութիւն մը կուտան իրենց աղջկի զաւակին, այնպէս կը կարծեն թէ իրենց ծնողական պարտականութիւնները լիովին կատարած են անոր հանդէպ :

Բայց կը սխալին չարաչար մեր ծնողները, վասն զի այդ եւ զանախով արուած դատարարակութիւն մը կը ծառայէ միայն ընել իրենց աղջկիւր՝ անընդունակ կեանքի պայքարին, անընդունակ ու անգիտակից իր բարձր կոչումին, ոչինչներով զբաղող ու ոչինչներ պահանջող, ամէն հոսանքէ ու հովէ տարուբերուող փետուր մը, եւ ամէնէն վերջը այր մարդուն հաճոյքի աւարկան :

Ո՛չ, ո՛չ, ալ ժամանակն է որ թօթափինք մեր ագիտութեան նոսրայնութէն, ալ ատեն է հասկնալու, ճանչնալու եւ ուղղելու այսքան դարերէ ի վեր մեր գործած սխալները, զարմա-

նելու մեր վշառները, փոխելու մեր հետեւած ուղղութիւնը աղջը-
կանց դաստիարակութեան գործին մէջ :

Պէտք ու անհրաժեշտ է փոխել հիմնովին մեր հետեւած սխալ
ու կործանարար դրութիւնը, պէտք է այն պատճառաւ որ այսպէս
կը պահանջէ կին տարրին լարձրացումն ու աշխուսոյումը, այր
տարրին օգուտը, իր համայնքին ու զինքը շրջապատողներուն եր-
ջանկութիւնն ու ապահովութիւնը : Որքան իրաւամբ կ'ըսէ մեր
ուսուցչապետ Ռ. Էֆ. Պէրպէրեան. «այր մը դաստիարակել, կը
նշանակէ մէկ մարդ միայն դաստիարակել, իսկ կին մը դաստիա-
րակել, կը նշանակէ ամբողջ սերունդ մը դաստիարակել» :

Կը տեսնէք, մ'վ ծնողներ, թէ ձեր բխնածին չափ անձուկ
ու սահմանափակ չէ եղեր կնոջ ասպարէզը. կնոջ վիճակած է եղեր
սերունդներ պատրաստել, սերունդներ դաստիարակել, սերունդներ
երջանկացնել, մէկ խօսքով սերունդներ անմահացնել :

Կինը՝ որքան մեծ ու նոյնքան դժուարին այս կոչումին պատ-
րաստելու համար ինչ պէտք է ընել, եթէ ոչ տալ աղջկան այր
մարդուն հաւասար սովորն ու զօրաւոր դաստիարակութիւն մը, որ
կարենայ պատրաստել կինը կատարեալ ու ճշիւ կեանքի մը, տալ
կնոջ այր մարդուն պէս այն ծանօթութիւնները որով կարենայ
անթերի կերպով կատարել իրեն վիճակած մեծ ու դժուարին պաշ-
տօնը : Ինչպէս այր մարդը, նոյնպէս ալ կինը պէտք է ճանչնայ
իր կեանքի դոյութեան, պահպանման ու երջանկութեան միջոց-
ները, մէկ խօսքով գծուի իրեն այր մարդուն նման ուղին՝ ուրիշ
պարտի ընթանալ անտայթաք :

Որպէս զի կինը երջանիկ և օգտակար ըլլայ պէտք է ճանչցը-
նել իրեն լուրջ ու բարձր դաստիարակութեամբ մը իր կեանքին
դժուարութիւնները ու բարիքները, պէտք է սորվեցնել իրեն
յաղթել ցաւերու, տառապանքի, կեանքի մէջ պատահելիք տեսակ
տեսակ ընտանեկան խոչընդոտներու և համեմիւ երջանիկ կեանքի մը :

Կինը սերունդներ պիտի պատրաստէ ըսինք, առ այս հարկաւոր
է որ կնոջ դաստիարակութիւնը խոտանայ ընտանիքի ու զաւկի հան-
դէպ ունեցած պարտականութիւններուն մէջ : Եթէ իր այդ պար-
տականութիւնը կատարելու համար պէտք եղած դաստիարակու-
թիւնով մը զննուած չէ կինը, ոչ միայն իր կեանքը դժբաղդ պիտի
ըլլայ, այլ նաև դժբաղդութեան ամէնէն մեծ աղբիւրը պիտի ըլ-
լայ իր ամուսնոյն և զինքը շրջապատող անմեղ էակներուն ալ :

Աղջիկը երբ աղջիկիւնութեան շրջանէն դուրս ելլելով կնոջական
շրջանը մտնայ, պէտք է որ կատարեալ գիտակցութիւնը ունենա
իր կատարելիք պաշտօնին, պէտք է իր գործին տէրն ըլլայ առաջին
օրէն, զի այն կեանքը ուր պիտի թեւակոխէ բաւական դժուար ու

փշալից է, պէտք է որ այդ կեանքը իրեն համար առեղծուած մը չըլլայ :

Աղջկան ծնողքը և յաճախ աղջիկը միակ մտածում մը ունենալ կը կարծեն, միակ սեւեռամտածում մը, որուն վրայ կը կեդրոնացընեն իրենց ուշն ու ուրուշը, որուն մէջ լրացած կը յուսան տեսնել իրենց ամուղջ խոհաները. ամուսին մը, կամ աւելի տէր մը, պաշտպան մը դանկու խնդիրն է այդ : Ոչ, ներդաշնակ ու կորովի դաստիարակութիւն մը ստացող աղջիկը, իր ինքնազիտակցութիւնը ունեցող աղջիկը երբեք պաշտպանի մը կամ տիրոջ մը պէտք չըզար, այլ ընկերոջ մը, անոր հետ մէկտեղ մղելու համար կեանքի պայքարը, բաժնելու կեանքի դաւանութիւնները և վայելելու երջանկութիւնները : Ըստ իս աղջկան մը գործունէութեան շրջանը աւելի մայրութեան շրջանին մէջ կը սկսի, կոնջ ամէնէն մեծ պարտականութիւնը այդ շրջանին մէջ կը շեշտուի :

Ընտանիքի մը երջանկութիւնը ապահովելու համար անհրաժեշտ է որ կինը գիտնայ այն գիտական ծանօթութիւնները, որոնց մով պիտի կրնայ մեծցնել առողջ ու կորովի դուստիներ, պէտք է գիտնայ պաշտպանելու իր դստակները՝ այն ամէն հիւանդութիւններէն, որոնց անխուսափելիօրէն կ'ենթարկուին մանուկները, չատ անգամ ըլլալով ճշմարիտ դոշը իրենց տղէտ մօր : Ֆիզիքական դաստիարակութեան հետ մէկտեղ կը սկսի նաեւ մանկան բարոյական ու մտաւորական դաստիարակութիւնը, որուն համար ալ կինը պէտք է անհրաժեշտ եղող ծանօթութիւնները գիտնայ :

Ուրեմն կինը մարդկութեան և ընտանիքին հանդէպ ունեցած դերին պատրաստելու համար, չքաւեր միայն թեթեւ ու մալիքեւութային դաստիարակութիւն մը, այլ պէտք ունի ան բարձր, լուրջ ու կորովի դաստիարակութեան մը որ երբեք չխտանար քիչ մը օտար լեզու և քիչ մըն ալ դաշնակ նուագել գիտնալուն մէջ :

Կիրառն

ԶԱՊԷԼ ԶԱՔԱՐԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ բոլոր ուժովս կ'ատեմ հինէն ի վեր՝ Պոսիւէ, Շաթոպրիան, Մասիյյօն, Վէւէն, Շորէնհաուէր, Շէյքսպիր, Կէօթէ, Լամարէին, Սիւլլի Բրիտոմ, Նիլէ, Նորտաու և դեռ իրենց սեւերէն շատեր, պատճառը այն է որ ջիղերուս կը դպչին իրենց տխրաբոյր էջերը, որոնք կարծես սահմանուած են անպատճառ միտքդ մութ տեղումները սաւառնեցնելու, և պաշարելու ամբողջ հոգիդ հիւանդ

տպաւորութեամբ մը: Կրնան անոնք շատ մեծ վարպետներ եղած
ըլլալ, կը հաւատամ, բայց ինծի համար նախընտրելի են զուարթ
ու կենդանի դրականութիւն ընողները. զոր օրինակ՝ Քաղանուլա,
Առման Սիլվէստր, աը Քօք, և որ ի կարգին:

Գեղեցիկ գպրութիւնը (belles lettres) կարծես թէ կը բողոքէ
ալ անոնց ակրաբոյր ձայնին դէմ, և միւս կողմէ, մարդ յոգնու-
թենէ խոնջած զուարթ՝ հանգչեցնելու համար, պէտք ունի միշտ
զուարթ ու պարզ ընթերցանութիւններու: Ընկերուհի մը, որուն
յայտնեցի իմ այս դաւաժարս, խիստ ծիծաղելի և անվայել դը-
տաւ. բայց ես չեմ վարանիր նորէն զայն հրապարակելու: Ամէն
մարդ իր ձաշակը ունի և այս՝ վէճ չի վերցնէր ընտաւ: Ի՞նչ ընեմ,
յանցանքը իմս է թէ ոչ բնութեան որ զիս այնպէս մը ստեղծեր է
որ լալկանութիւններ չեմ կրնար մարսել:

Ձեմ կրնար, զոր օրինակ, ձեզի հետ ձայնել թէ հոգեզմայլիկ
բանաստեղծ մըն է Պ. Դուրեանը, երբ կեանքին մէջ զուարթ տող
մը չստորագրելով, կը գրէ.

«Եթէ տգոյն մահու հրեշտակ,
«Անհուն ժպտով մ'իջնէ իմ դեմ,
«Շողիսնան ցաւս ու հոգիս.
«Դիտեցե՛ք որ դեռ կենդանի եմ...»

Ի՞նչ կայ բոլոր ասոր մէջ բանաստեղծական, կ'աղաչեմ, անձ-
նական տպաւորութեան զգայնատութենէ աւելի, որ թախծութեան
տակ կը թողու ամբողջ էութիւնդ. և ընթերցմանդ աւարտումէն
վերջ տարտամ փափաքը կ'ունենաս երեւակայելու սեւ նոճիկները,
դամբանի մուրերը, լալկան սրբալիները և մեռելատիպ քնարեւ-
գութիւնները, սեւ հովերը, մուսյլ ամպերը, կեանքի ցաւերը, մա-
հը վերջապէս, երեւակայական հիւանդութիւն մը հաղնելով վրադ,
որ կը մղէ զքեզ անպատճառ երկու տող բան մրտաւելու նոյն լա-
ւահաւաչ ոճով որպէս զի հոգւոյդ փոթորիկները, ներքին խռովքդ
փարատին:

Այս հիւանդութենէն բռնուած չէ՞ որ կը ստորագրեն արդէն
ժամանակակից երկսեւ գրողներէ շատեր ալ: Ահա օրինակ մըն ալ:
Եւ օրիորդ մը կը գրէ.

«Թափորն անցաւ, փողոցները մերկացան
«Մեւ հոժութեան ալիքներէն խուժախան,
«Ամեն իր աչ շուրջ դեմք մ'առաւ սրգազգած,
«Հանդիսաւոր խաւ մը կ'իջնէ տակաւ ցած:»

Նոյնպէս ուրիշ երիտասարդ տխրամոլ գրող մը, մեռելաբոյր խունկին վրայ խօսք ասնելով.

«Պիրկ շարժումով մը գաղտնի
«Ուր ցաւն հոգւոյն կը կծկի—
«Խունկ ծխայ կիւն մ'—հո'ւր հոգի—
«Խարոյկին շուրջ դըրած ծունկ:

«Մայրս ե. գաղտնի իր արցունք
«Աղօթիւն մեջ կը ցամփի.—
«Խունկը կ'երէ մեղմակի.
«Կասուն, շփոթ, դընե ունկ:»

Հոգեկան ծանր ու թոյլ անհանգստութենէ, ձանձրալի նոյնու-
թենէ, և միօրինակ տղաւորութենէ տարբեր կերպով չեն ազդեր
ասոնք իմ կազմութեանս վրայ, և միտքս կ'ընդլզի կարծես այս
սեւ հորիզոններուն դէմ, պատուել անոնցնու համար անգին, ան-
զիւ կողմը զուարթ եղերքին, որ կազդուրէ ուսման տակ ճնշուած,
պաշարուած գլուխս: Կը մտածեմ որ ամէն մարդ առաւել կամ
նուազ տարբերութեամբ յոգնած գլուխ ու տառապած սիրտ մը
կ'ունենայ. ի՞նչ հարկ ուրեմն դայն վերստին ճնշել այդ մեռելա-
բոյր գրականութիւններով, որոնք օրուան պարբերականներուն
մեծ կէսը կը լրացնեն. և եթէ յամառիս ատենցմէ բան մը չկար-
գալու, ինքզինքդ պատժած կ'ըլլաս քու լեզուիդ գրականութե-
անէն զրկուելով:

Կը հասկնամ որ տխրութենէ կ'ազդուինք, և տակաջն
դայդ բարեխառնելու համար դոնէ գրականութիւն անուան տակ
չաղախածնիս այլափոխենք, թողունք սա մեռելի, հոգեւարքի,
թոքախտաւորի, ջլախտաւորի ջղադունց ըլլալու ատիւճան անտա-
նելիութիւնները. աւելի զուարթ, աւելի շինիչ, աւելի նոր ու
փոփոխական նիւթեր չեն պակսիր բնաւ:

Մեր գրողներուն մէջ, սիրած ցանցաւ դրիչներս աչքիս դէմ
բերելով անոնց մէջէն կը հաւնիմ նախ Զօհրապին, Փանոսեանին,
Ալիիարին, Վարպետեանին որոնք d'après nature կը գծեն, կը
համակրիմ Հ. Ասատուրին լուրջ ուսումնասիրութիւններուն, Ան-
տոնեանին ջղային ոճին, Դուբեան Սրբազանին միսթիք ներշնչում-
ներուն, և Բրօֆ. Ճէճիգեանին խորաթափանց գնալութիւններուն.
Իսկ կ'ընտրուն մէջ կը սիրեմ, կը սիրեմ ամէն անոնք որ կ'անքեր-
նուն մէջ հաղիւ երեք անգամ տկարութիւնը ունեցած ըլլան ա-
նունինս պառկեցնելու գրութեան մը տակ, որ մեռելութիւն չհոռի:

Տխուր վայրկեանի մը տարուորութեան տակ, մարդ ինքնին բանաստեղծ, յուստես է արդէն, և լաւագոյն ազգակը իր անձին, հապա որչա՞նի եւս իր գիմացիներուն: Զղային կազմուածքի մը համար, ինչպէս խմ, անտանելի կ'ըլլայ ընթերցումը այդ կարգի մեռելութիւններու մեռելածին հեղինակներուն, եւ չիտակը, ազէ՛կ փափկանկատութիւն, հրաւիրել հրապարակաւ ուրիշներն ալ մեր հիւանդոտ ներշնչումներուն մէջ միորձուիլ . . :

Ինծի համար, գրական այս կարգի տափակութիւններէն տա-
փակութիւնը չկայ:

Բերա

ԱԼԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ՀՕՐԵՂԲՕՐԱՂԶԿԱՆՍ

ՕՐ. ԻՐ ՄԱ. ԽՈՒՆԿԻ

Կ. Պոլիս, 15 Մարտ 1906

Սիրելիս Իրմա,

Հասան վերջապէս այնքան բաղձալի դպրոցի օրերը, որոնք կեանքիս էն անուշ, էն վուարթ ու էն անմեղ օրերն էին: Տակաւ լին դասաւանդութիւնք չէին սկսած ու ես և ինծի պէմներ, տղա-
յական անառակութիւններով և աննպատակ չարութիւններով կ'ան-
ցընէինք մեր ազուր ժամերը, կարծես խեղճ դաստիարակութիւ-
նները նեղելու չար դիտումով. սակայն ատոր պատասխանատու
չէինք կրնար ըլլալ ազատութեամբ, քանի որ բնութիւնը իր
անըմբռնելի տնօրինութեամբը այդ անգիտակից զգացումը դրեր է
տղայ-մարդուն զգայարաններուն մէջ, որոշեալ ժամանակի մը
համար, որուն ուղէ չուղէ պիտի հնազանդի ու ընէ այն բաները՝
որ կը նեղեն մեր մեծերը, որպէս թէ իրենք պիտի եղած չըլ-
լային. ուրիմն ինչո՞ւ մեզի կը պատժէին. բայց հարկա՛ւ սիրելիս,
չարերը կը պատժուին, ու քանի որ մենք ալ չար էինք, արժանի
էինք պատիժի. ա՛յդ, Իրմա, իրաւունք ունին եղեր մեր դաս-
տիարակութիւնները զմեզ պատժելու. անշուշտ իրենց նպատակն էր
այդ ակամայ ու անգիտակից չար սովորութիւնները արմատախիւ
ընել ու հանել մեր մէջէն ու անոնց տեղ աղնիւն ու բարին ներշնչ-
չել. այն ատուն թշնամի կը նկատէինք զիրենք, բայց այսօր երբ
կ'անդրադառնամ անցեալին վրայ ու ներկային հետ կը բաղդա-
տեմ, կը զգամ անոնց բարձր ազդեցութիւնը բարոյական կեանքիս

վրայ, երախտագիտական զգացումներով կը զեղու. սիրտս ու կը սիրեմ զանոնք, այնչափ՝ որչափ, կը սիրեմ կեանքին հեղինակները:

Դպրոցին բացումէն 15 օր վերջ ամէն բան կարգադրուած էր, կարգերու փոփոխութիւնք տեղի ունեցած էին, և դասերը կանոնաւորապէս կ'աւանդուէին. ա'լ զրազումը գիրքերուն և տետրակներուն մէջ կը գտնէի, այլ ոչ անառակութեան մէջ. ա'լ չէի պատժուեր, վասնզի չարութիւն ընելու միջոց չէի գտներ. ինչ աւելի, ևս ալ հանգիստ էի, գոտարարակոչներս ալ:

Նախանձը տիրապետած էր ներսիդիս, այս բանը խիստ հաճոյ կը թուէր մեր գաւառի բնակիչին, որուն համար կը զովէր զիս, բայց ոչ միայն զիս, ալ դասընկերութիւններէս մեծամասնութիւնը, զիրար գերազանցելու մարմաջ մը ունէինք. հետեւաբար տիրապետողը չար նախանձը (jalousie) չէր, այլ բարի նախանձը (émulation) որ մարդս գէպի մոտադրական յաաւջգիմութիւն կը մղէ:

Բոլոր դասերուս մեծ եռանդով կ'աշխատէի, սակայն... սակայն այն չարածիճի ձեռագործը և ձեռագիտութիւնը երբեք չէի սիրեր, զարմանալի չնոս գտներ, իրմաս, իմ ազու խելքովս կարեւորագոյնը անպէտ կը դատէի, կ'ատէի բացարձակապէս, տկամայ կ'աշխատէի, ոչ թէ սովորելու համար, արդէն չէի սովորեր բան մը, այլ նիշ չկորսնցնելու համար. ձեռագործի և ձեռագիտութեան սահմանուած ժամերուն վրայ կը ցաւէի, ու կը մտածէի թէ, աւելի լաւ չէ՞ր ըլլար երբ այդ ժամերը սերտողութեան յատկացուէին, ու ևս ասեղ դերձանի տեղ, մատիտ ու գրիչ խաղցնէի, թուաբանութեան խնդիրներ լուծելով կամ աշխարհագրական քարտէս մը կամ գծագրութեան դասին համար paysage մը պատրաստելով. բան մը՝ որ, սիրելիս, ապագային օգտակար չըլլար այնչափ՝ որչափ կ'ըլլայ կարը ձեռք: Սակայն հեռատեսութիւնս խիստ անձուկ էր, և տակաւին ի վիճակի չէի անոր սահմանէն դուրս թափանցելու և օգտակարը հաճոյալիէն նախընտրելու, որով օր ըստ օրէ տեսելութիւնս կ'աւելնար, այս աւելորդ նկատած դասիս դէմ, ու կը սկսէի խոյս առլ գասարանէն մէկ քանի գաղափարակից ընկերակիցներու հետ: Եթէ հազուադէպ չիմնուէ պէտք ունենայի, որովհետեւ այլեւս մայրիկս չէր կարեր, այն ստեղծմիայն կը մօտենայի դասին, ու չազրութիւն կը դարձնէի, մինչև որ հազուադէպ մննար, անկէ անդին զարձեալ փախուստ. ասիկա լաւ վախճան չալիտի ունենար, բայց ինչ օգուտ, ակամայ ենթակայ էի այդ վիճակին: Ինչ, թողուլ մտքի զրազումները, անոր անունը հայթայթող ուսումնները և ձեռ ու կարով զրազիլ, ճհ, անկարելի էր, չէի կրնար թողուլ հայերէնի դասերը, թարգմանութիւն, լուծում, քերականական կանոններ, որոնք բնականաբար

դժուար են ու ճանճրացուցիչ ամէն տղու համար, սակայն, ինծի համար, ո՛չ ձեւ ու կարին, ասեղ ու գերձանին չափ. հաճոյքով կը սովրէի ֆրանսերէն դասերս, այն անտանելի ու անվերջանալի կանոնները. մեծ համբերութեամբ կ'աշխատէի կը տքնէի լուծելու համար թուարանական խնդիրներ, գտնելու համար Յիսուսի ծննդեան թուականին և Հովերոսի ծննդեան թուականին տարբերութիւնը, երկրիս արեւէն ունեցած հեռաւորութիւնը, երկրիս արեւուն շուրջը դառնալը, անոր հակումները, մոլորակները, ուսումնական աշխարհագրութեան մէջ:

Մեծ եռանդով կը հետեւէի դիտութեան դասերուն, մեծ փափաքով կը սիրէի գիտնալ թուրքուն և սրտին դերը մարդուն մարմնոյն մէջ. ստուգին, ստամոքսին, աղիքներուն պաշտօնը մարսողութեան և շնչառութեան եղանակը, արեան շրջանի գործարանը, ջիւղերուն և ուղեղին պաշտօնը ևն., և անոնց առողջապահութիւնը.

Աշխարհագրութիւնը, ի՞նչ դուարձալի դաս, ի՞նչ սիրուն դաս. որչափ մեծ հաճոյք կը պատճառէր ինձ սովորիլ ծովերը, ովկիանոսները, դիտնալ անոնց տարածութիւնները, ճանչնալ հինգ աշխարհները, անոնց բաժանումները, սովորիլ նաև բարձրաբերձ ու ձիւնապատ լեռները, ընդարձակ անապատները, հսկայ գետերը, խորշերը, ծոցերը, քաղաքները, գիւղերը ևն. հասկա ան մտաւոր ճամբորդութիւնը. երեւակայութեամբ երթալ պատիլ դիտութեանց արուեստից քաղաքները, Հիւսիսներու, Ռուսներու ու շատ մը հանճարներու հայրենիքները. Ռաֆայէլներու, Միքէլ Անճէլօներու ծննդավայրերը: Նաեւ չմոռնանք ջերմոկներու քաղաքը Պրուան և հաւերուս քաղաքը Կեսարիան. ըսէ, սիրելիս, ըսէ, ասոնք միթէ հաճոյք չեն, օղտակար եւ հաճոյալի միանգամայն. սակայն բնաւ չեմ մոռնար ողբացեալ մեծ մայրիկիս խօսքը «խապստն պիտի ըլլաս, աղջիկս, ի՞նչ պիտի ըլլաս, Քէշիշ Տաղին, Պրուան, Կեսարիան ի՞նչ պիտի ընես, քեզի ի՞նչ, դուն նայէ որ աղուոր կարել սովորիս, որպէս զի ինծի հաղուստ մը կուրես...»: Այն օրէն սկսեալ մեծ մայրիկիս ներկայութեանը դաս չէի պատրաստեր:

Հապա գծագրութիւնը, ո՛ւր մնաց, ո՛ւր ձգեցի, տղայ հասակէս մինչև այսօր սիրանար եմ այդ արուեստին: Շատ սլզտիկ էի, սիրելիս, նստած սեղանի մը տաշիւ, որ տուն տակունն ոտքերս աթոռէն վար կը կախուէին, գետին չի հասնելու պոստանով, քարէ տախտակին վրայ «տ» գրելու վարժութիւն կ'ընէի, և քարէտախտակը գիրին ուղղութիւնը պահելու համար գիծեր չունէր, գրած «ա»երս կը ծռէին, կ'աւրէի, կը շտկէի դարձեալ կը

ծռէին, ես ալ յարձանայով կը ս'իսէի լալ, տյսպէս կիրակի օր մըն ալ երբ կ'աշխատէի, հայրիկս տունն էր, նոյն բանը դարձեալ պատահեցաւ, այս անգամ ալ «բ»երը կը ծռէին, դարձեալ սկսայ լալ. իսեղձ հայրիկս շփոթած այդ անակնկալ լալու ազմուկէն, վազելով փութաց քովս և իրողութեան վերահասու ըլլալով սկսաւ քահ քահ խնդալ վրաս, և միւս կողմէն ալ ուղղութիւն կուտար ծռած «բ»երուն, անոնց մեծագոյն մասը աւելելով սակայն. ի տես այս ջնջումին կարծես արժանապատուութիւնս վիրաւորուած զգալով և միանգամայն այնչափ աշխատութեանս մէկ վայրկեանի մէջ ջրուիլը տեսնելով լալէն զատ հեծկտութեամբ մըն ալ աւելցաւ. Հայրիկս յուզուելով այս տեսարանէն այլայլեցաւ ու նստաւ. քովիկս, արցունքներովը իր իսկ թաշկինակովը սրբելով համբուրեց մազերս որոնք քրտինքէն թրջած էին, դարձուց քարեօտախտակը և ըսաւ, «մի լար աղջիկս, նայէ հիմա քեզի ինչեր պիտի չինեմ, մարդեր պիտի դժեմ տախտակիդ վրայ» այս ըսելով սկսաւ գծել. լու կը յիշեմ թէ իր այդ գծած պատկերը մածնալճառ մը կը ներկայացնէր. գլուխը սրածայր գդակ մը՝ իր թաշկինակովը եղերուած. որուն մէկ ծայրը ալեծածան ուսնի վար կը ձգուէր. մէջքը լայն դօտիով շալվար մը հագած էր ու ոտքերը սրածայր տրեխներ կը կրէր, որոնց ծայրերը բոժոժաւոր ծոպեր գետեղուած էին. ուսին վրայ հանգչած երկայն փայտեայ ձողէն՝ չուաններով կախուած էին բոլորածու երկու փայտեայ ընդունարանները, որոնց մէջ կը տեսնուէին կլոր կլոր մածունին ամանները. ի տես այս սիրուն պատկերին, լալ հեծկտութեամբ, ամէն բան մոռցայ, նոյն իսկ ծուռ «բ»երը, որոնց համար ոյնչափ արցունք թափեցի, սկսայ ես ալ հայրիկս պէս քահ քահ խնդալ. Այդ օրէն իսկ ծնաւ մեծ փափաք մը սրտիս մէջ, այդ գերազանցապէս սիրուն արուեստին հանդէպ. զպրօցական շրջանիս մէջ միշտ յամառ աշխատող մը եղած եմ այդ դասին: Ու ձգել այս գեղեցիկ գործերը, ու ձեւադիտութեան աշխատիլ, վերջապէս այս գաղափարը չը կրցի հաշտեցնել մտքիս հետ մինչեւ այն օրը՝ երբ Գալէնտէրի մէթոտը ներս մտաւ զպրօցէն, հեղինակին հետ նոյն իսկ:

Է՛հ, սիրելիս, այսօրուան համար այսչափ կը բուռէ, գործերս ինծի կը սպասեն:

Հօրեղբորաղջիկ
ԵԻՏՈՒՄԻ ԽՈՒՆԿԵԱՆ

ԵՐԵՍԱԿՆԵՐ

ՖԷՄԻՆԻԶՄ

Մտքէս չէի անցուցած երբեք այս տեսակ նիւթի մը վրայ գրել, նիւթ մը որ բնաւ չյարմարիր մեր բարքերուն եւ որ բոլորովին խորթ կը հնչէ մեր... տգեղ սեռին անդամներուն ականջին, պահ մը ընդունելով որ մենք ամէնքնիս ալ գեղեցիկ սեռի երեւակայական մղձաւանջը կը կազմենք ու մեր... կէսերը՝ տգեղ սեռներ:

Մենք Ֆէմինիստք չենք ունեցած դեռ, հակառակ անոր որ մեր մէջ դառնում են իրենց հողաթափին ծայրովը ամուսիններն հալածող կիներ, դաս տուող աղջիկներ՝ որոնց վարժուհի ամուսնը կուտայ Գափամաճեանի Առձեռնը. սակայն անոնք չեն որ Ֆէմինիստք կրնան կիները. տաքթորուհի ըլլալու է, երկաթագործ, հացադործ, ճարտարապետ, չեմ գիտեր տակաւին ինչ ըլլալու է ճշմարտապէս Ֆէմինիստք կոչուելու համար: Էրիկ մարդոց պէս... բանդալոն հագնելու է, գաւազան գործածելու է, անոնց պէս գլխարկ, անոնց պէս կօշիկ հագնելու է Ֆէմինիստք ըլլալու համար: Միայն կարճ չըջազդեստ հագնիլը, փողկապ և օձիք դնելը օգուտ չունի:

Մենք ո՛ւր, Ֆէմինիզմը ո՛ւր...:

Եւ արդէն կրնաք լստահ ըլլալ որ ասանկ նիւթի մը վրայ երբեք չպիտի միտքէս անցնէի դարձեալ գրել եթէ պատահմամբ վերջերս հրատարակուած Թէօտոր Ժօրանի Le mensonge du féminisme գիրքը ձեռքս չհասնէր, որուն ընթերցումը զիս կատղեցուց և քիչ մնաց փառաւոր համակ մը պիտի գրէի Ժօրանի:

Այս մարդը կրն ըսուած տարրին թերութիւնները միայն ուսումնասիրած է իր գիրքին մէջ, և իր կարծիքով աշխարհիս բոլոր կիներն ալ ապուշ, տխուր, միամիտ, տղայական արարածներ են:

Օ՛հ, աս ի՞նչ կնահաճոյութիւն է:

Թերեւս կրնաք խորհիլ որ գէշ ատեն մը որոշած է Ժօրան իր գիրքը հրատարակելու համար, վասն զի հիմակ վերջապէս առաջնական տեսլիչ է մնացեալ Ֆէմինիզմով դառնելու, անոր վրայ խորհրդածելու, անոր առաւելութիւնները կամ չարիքները մասնաշնչելու, սակայն ինչ որ ալ ըլլայ Le mensonge du femi-

nismը այն տեսակ գիրք մըն է որուն վրայ մարդ լըջօրէն կը խորհի :

«Ինչո՞ւ համար, կը գրէ ժօրան, կ'ատեմ այն կիները որոնք զբականութեամբ կը զրազին: Պարզապէս անոր համար որ պէտք եղած doseը չեն առներ զբականութենէն: Հազիւ թէ Մօնթէրէնը կարող կ'ըլլան գնահատելու և ահա մինչեւ ժօրմ Օնէ բարձրանալ կը նկրտին: Անգամ մը որ այս աստիճանին հասնին, ա'լ անկից վերջը կ'ուղղուին դէպի Պուրմէ: Ասկից ալ չբաւականանալով իրենց ճամբուն վրայ կը հանդիպին Բօլ Հէրլիէօի, Ռոտենդալսի և վերջապէս Հիւզմանսի: Եւ այսպէս շարունակաբար» :

Այս բոլորը թուելով ժօրան ըսել կ'ուզէ որ կինը թեթեւութեամբ, իմաստակութեամբ, տխմարութեամբ չաղուուած էակ մըն է :

Բայց զարմանալին հոս է. իր վարդապետութիւնը այն տեսակ հիմի մը, սկզբունքի մը վրայ հաստատուել է որ, մարդ ուղէ չուղէ քիչ մը կը խաբուի և ինքնիրեն կը հարցնէ թէ մի' գուցէ ես սխալ լիմ: Մանաւանդ թէ զիրքը արդէն տասնէն աւելի տարիներու ուսումնասիրութեան, հետազօտութեան, աշխատութեան արդիւնք է :

Սակայն ինչո՞ւ բոլոր այս ծիծաղելի յաւաքնութիւնները միայն կնոջ երեսին տալ, չէ՞ մի որ էրիկ մարդիկ ալ կրնան ունենալ այդ ունակութիւններէն: Ինչո՞ւ կինը միայն թերի, միայն սնկազմ կը գտնեն սա էրիկ մարդերէն շատեր :

Ժօրան ֆէմինիզմը քննած ատեն ահաւիժօրէն կը դատաւիւտէ կիները. ֆէմինիզմին տկար կողմերն է որ միայն ուսումնասիրած է սակայն. ահոր՝ ուրիշներու կողմէ մասնանշած առաւելութիւնները և բարիքները կարեւորութիւն չունին բնաւ իր աչքին, ան չմտածեր թէ պէտք է կինը ընտանիքին մէջ էրիկ մարդուն հաւասար ըլլայ: Խնդիրը արդէն տաղանդ ունենալուն վրայ է. կին ես եղեր թէ էրիկ մարդ, եթէ հանճարի կայծ մը կը վառի ուղեղիդ մէջ, կը յաջողիս: Ես այնքան անճամուլ, այնքան միա-միտ չեմ ըսելու համար թէ Շամինատ Շումանի հոգին ունի, իսկ ժօրմ Սան-Ֆլօպէրինը: Ընդհակառակը. մեր սեռը այդ բարձր անհատակութիւններու կտրուկութեան չէ կրցած արժանալ, և Շամինատ մնացած է Շումանի խրատիլակը ու ժօրմ Սան հրէջ մը ոլիտի նկատուէր ֆլօպէրին քով, եթէ Ռօզմօնտ ժէբարէն, Տիկին Քաղիւլ Մէնտէսէն վերջը աշխարհը եկած ըլլար: Եւ ասիկա՝ իրաւունքով: Անոնք ուրիշ են, մենք ուրիշ. ինութիւնն է յանցաւորը, բնութիւնը որ չէ ուղած այս երկու տեսն ալ միեւնոյն յատկութիւններով օժտել, միեւնոյն թերութիւններով կազմակերպել :

Իրաւունք ունի ժօրան սա կէտին մէջ, խորհելով թէ ֆէմին-

հիզմը կնոջ վտարանջութիւնը ըլլալու է, բայց ո՛չ թէ էրիկ մարդուն՝ ալ նոյն իսկ իրենց անձին դէմ, իրենց յատուկ թերութիւններուն դէմ. ապահովարար եւ իմ մասին պիտի ուզէի այդ ըմբռնումով ֆէմինիստ ըլլալ, սիրտով եւ գտնաւորութիւնով տկար կնոջ, թեթեւաբարոյ, արդուդարգամով աղջիկներու դէմ դրոստ մը կաղձակերպելու համար, այն կիներուն եւ աղջիկներուն դէմ, որոնց մտահոգութիւնը կը կայանայ միայն հրապուրելուն եւ դարպասուելուն մէջ:

Ասիկա կ'ըմբռնեմ, եւ կրնաք վստահ ըլլալ որ կնոջ շնորհներէն ոչինչ պիտի .կորսնցնէ ատիկա. ինչոր ալ ըլլայ, էրիկ մարդու պէս միայն չպիտի ուզէի ապրիլ, անոնց թող ըլլայ իրենց արհեստները, իրենց բոլոր գրական ձեռնածութիւնները:

Այն կիները միայն ֆէմինիստ կ'ուզեն ըլլալ, որոնք երբեք չեն կրցած իրենց կեանքին մէջ ճշմարտապէս կի՞ն ըլլալ:

Անկեղծ կամ կեղծաւոր ֆէմինիստ չկայ աշխարհիս վրայ. խառնուածքի տարբերութիւն կայ միայն:

Խօսքը մէջէնիս. դեռ ո՛ր եւ է յաջողութիւն մը չունեցած, հկարչութեան, երաժշտութեան եւ գրականութեան մէջ, ասանկ կը յոխորտանք, եթէ թէնի պէս հրաշալի քննադատ մը ունեցած ըլլայինք մեր սեւեինմէջ, եթէ ալ Պօք կին եղած ըլլար, եթէ Լամարթին կամ Հիւկո կիներ ծնած ըլլային, այն ատեն էրիկ մարդոց գործը լմնցած էր, գրականութեան մէջ, այն ատեն, եթէ կրնային թող խօսէին մեզի հետ:

Մեր չունեցած առաւելութիւններով կ'ուզենք երբեմն փառաւորուիլ, չէ՞:

Մեզի Աստուած ստեղծած է պարզապէս սուսէն դուրս չելլելու, սուսին մէջ զբաղելու, կարդալու, երգելու, դաշնակ կամ ջութակ չալելու (չալելու միայն) սիրելու ու սիրուելու համար: Ա՛ս է մեր արժանիքը: Ասոնք՝ ըսել տալու չեն էրիկ մարդոց թէ մենք անկազմ, տկար, միամիտ արարածներ ենք: Մե՛ր ունեցածն ալ էրիկ մարդիկ չունին:

Միամիտները... կին մը տեսնելու համար հոգինին կուտան, եւ Տիկին Մէրէլի լմնդերը մէջտեղը ըլլալով հանդերձ, կայսլանեն մեզի տակաւին:

Ֆէմինիստները կը հասկնամ, բայց գոնէ մեզի մի՛ հեգնէք, մեր սիրելի՛ ազնիւ... կէսերը:

ՄԱՌԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

— — —

Երեց մը ծերուկ եւ շատ աչքաւի,
 Հոգւով երանիկ ու սրբովն արի,
 Տաճարին մէջ օր մ'երբ կը փարոգէր,
 Տեսնելով մեղքի մարդոց եռն ու զեռ՝
 Հընազանդութեան վրայ խօսք բացաւ.
 Իբր օրինակ, եւ ապացոյց մը բաւ,
 Պատմութիւն մ'առաւ Աւետարանէն,
 Եւ պատմիրեց որ նախ խաչ մը հանեան:—
 «Օրհնեա՛լ ժողովուրդ, ըսաւ ան ապա,
 «Ձեր չարութիւններն, ոխերն անոպա,
 «Ձեր մեծ հայրերէն ձեզ կ'այլաստեն.
 «Չունիք դուք անոնց ոչ սրտէն, սերէն,
 «Ոչ աչքի իդէն մաս մը սիրակաւ,
 «Բարեպաշտութիւն, զրբութիւն եւ կամ.
 «Հնազանդութիւն չկայ ձեզ համար,
 «Չարիքներու մէջ կ'ապրիք անհամար:
 «Հայր Աստուած երբոր Սուրբ Աբրահամէն
 «Միամօր որդին ուզեց որ զոհեն.
 «Նա շրջեցուցած իր մէջ ձայն ամեն
 «Հըրամանիկ դիմ չուզեց որ յամեն.
 «Իսկոյն դանակ մը նսնել առած փայտ,
 «Հայր ի՛նչ որդի տունէն շուտ եղան անյայտ:
 «Կը տեսնե՛ք նախնեաց մեծ հաւատքն ու սեր,
 «Մինչդէռ դուք ասոնց փոքր չեք ուտեր . . . »
 Խօսքը բերանէն եր դեռ երեցին մեր,
 Ամբոխին մէջէն կիկն մը աչեմեր,
 Դեպ առաջ եկաւ ձեռքը կարկառուն
 Եւ զոյցեց յանկարծ ունկրկողներուն.
 — «Աստուած այդպիսի զոհ մը սրտաբեկ
 «Ձեր կրնար ուզել մօրմէ մը երեք'ի:»

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ



ԳԱՒԱՌԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՂԻՆ



Գաւառաւորնակ հայ ուսանողուհիներու վրայ կատարուած լուրջ ու ճշմարտապէս անկեղծ ուսումնասիրութիւն մը, ճշգրիտ կերպով երեւան պիտի բերէ անոնց ներքին հակումները իրենց բնատուր զրոշմովը :

Դաստիարակուհիներէն ոմանք աւելի տեսականօրէն ըմբռնած՝ կարծես խորաթափանց սրատեսութեամբ անոնց ներքին ընդունակութիւնները համկնալ կրցողի ինքնահաւանութիւնը ունեցած են, առանց սակայն տարիներու երկար փորձառութեան :

Գաւառացի ուսանողուհին իր մտաւորական անունդէ զուրկ վիճակին մէջ սխալ քննադատութիւններու ենթակայ եղած է, եւ իրօք կարգ մը սովորամօլ համակերպութիւններ ուրիշներուն կամ շոտութիւններուն խաղաղիլը դարձուցած են զինքը, փոխանակ ինքնաճանաչութեամբ և զիտակցաբար ապրելու անհրաժեշտութիւնը զգալու :

Իրենց այս խղճալիօրէն արգահատելի վիճակին մէջ հասարակաց խմբման քննութիւն, իբր թէ անոնք ունէ մտաւորական կամ բարոյական կարողութիւն մը անկնելու ընդունակ չ'ըլլային, չունենային իրենց յատուկ հոգեկան ազնիւ բարձրացումները, կեանքին նուիրակնութիւնը կազմող ուսման խոչալները :

Իբրը իրենց խալութեանը մէջ ըմբռնելու ատակ միտքեր՝ պէտք է լաւատեսութիւն ունենան դաւառացի հայ ուսանողուհիին մօտին, վասնզի դաւառներու մէջ ուսանողուհի կեանքը երբ նկատի աւաններ պիտի տեսնենք որ նիւթական զանգուրթեանց զէմ մաքաւիլ պէտք է, մտաւորական բարձրացում մը ձեռք բերելու համար :

Ընդհանրապէս անոր կրթուելու, դարդանալու փափաքը իր սաղմնային վիճակին մէջ կը վիժի, երեւութամօլ անհասներու անգլխատից կրթասիրութեան ազդեցութեանը տակ, ու անոնք անստարբեր իրենց ժամանակի կենսական կորուստին, լսին համալերպութիւնով մը կ'ստիպուին անոնց ագլխութեան զոհուիլ :

Անոնք՝ համբալ, խալ մտքերու կործանիչ առաջնորդութեամբ իրենց բնածին կարողութիւնները կը կորսնցունեն, և զիրենք դարձայնելու գործին կանչուողներուն կողմէն խոչ, առանց խղճահարութեան կը դատադարձուն, ենթարկուելով իրենց բարոյական և իմացական կարողութիւններուն ամլացման :

Պէտք է ըսել սակայն անմիջապէս թէ կրթական ֆանքերու ամլութեան բուն պատճառը ոչ ծնողքներն են, ոչ ուսանողուհիները :

բովանդակ պատասխանատուութիւնը անոնց համար աշխատելու
գծուարին գործը ստանձնելու յաւակնութիւնը ունեցողներուն այ-
սինքն Հոգաբարձուներուն տպիրարութեան քովն է :

Մասային կարողութիւններուն մէջ խեղճ ուսանողունին միայն
յիշողութիւնը զարգացնելու վիճակին կ'ենթարկուի, առանց անհա-
տականութեան զգացումներ ունենալ կարենալու և առիթը վայե-
լելու մտաւոր զարգացման հետապնդման :

Եթէ ճշմարտապէս գաոտիարակուհիի կոչում ունեցող ուսուց-
չունիներու խնամքներուն յանձնուած ըլլային մեր գաւառի աղջիկ-
ները, կրթական սրբան հիանալի արդիւնքներ ձեռք բերել հա-
րաւոր պիտի ըլլար :

Իսկ այսօր ճիշդ հակառակն է :

Մեր գաւառի ուսանողուհիները, երեւութամոլ արարածներ են
կարծես, անշուշտ ընդօրինակութիւն մը անախառ ուսուցչունիներէ,
որոնք ո և է կրթական խեղալէ գուրկ՝ մի՛ միայն վարժուհի և ըսել
տալու փառասիրութեան յագուրդ տալու և կամ լոկ նիւթա-
կան վարձատրութեան համար կը պաշտօնավարեն :

Հետեւաբար տակաւին շատ հեռի է այն ժամանակը, ուր հա-
կառակ զինքը շրջապատող տախտիկութիւններուն, շատ վեր, կար-
ծուածէն աւելի վեր տաւառնելու ընդունակութիւնները ունենայ,
գաւառի ուսանողունին, իւրացնել կարենալու համար այն լոռոր լա-
ւադոյն յատկութիւնները, որոնցմով ճշմարիտ կինը, գիտակից կինը
պիտի կարենայինք ողջունել, ազնիւ և զարգացած սերունդ մը
արտադրելու պաշտելի գաղափարականով աւելցուն :

Ամառիս

ԲՐԱՅԻՈՆ ՀԱՊԵՇԵԱՆ

Մ Ե Ր Գ Ա Ի Ա Ռ Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ն Ե Ր Ո Ւ Ն

«Ծաղիկ»ի Բ. Բ. Գ. Վեցամսեայն

Ծաղիկի երկրորդ վեցամսեայն, ինչպէս ծանուցինք, սկսած է
արդէն : Այս առիթու կը խնդրենք գաւառի մեր ազնիւ բաժա-
նորդներէն և բաժանորդուհիներէն որ հաճին յղել մեզ իրենց երկ-
րորդ վեցամսեայ բաժնեգինը, նկատի առնելով մեր կանխիկի
դրութիւնը, որպէս զի կարենանք շարունակել թերթերու առա-
քումը իրենց հասցէներուն :

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս.

ԿԻՆ ԱՌՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Պ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Պ

ՍԵՌԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ.—

ԼԱՒ ԸՆՏՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Հեղինակ ԲՕԼ ՄԱՆԹԻԿԱՅՑԱ

Մարդարանուքեան ուսուցիչ եւ անդամ Իսաչիոյ ծերակոյցին

Եթէ երբէք տպաւորութիւնը վայրկեանական չէ եղած, այլ համակրութիւնը տակաւ առ տակաւ գոյացած է, և եթէ երբէք զարգացած է յարածուն կերպով, ճշմարիտ տարիանք մը ըլլալու աստիճան, բառին անձուկ իմաստով, այն ատեն բոլորովին անօգուտ պիտի դառնան իմ առած փորձառական խորհուրդներս: Իւրաքանչիւր այցելութեան, պիտի ուղղէք կամ պիտի հաստատէք նախորդ տպաւորութիւնը, անդիտակցաբար և առանց այդ բանին վրայ խորհելու: Առաջին տպաւորութիւնը կամ պիտի պաղի եւ կամ պիտի արծարծուի:

Որքան սէրեր, որքան ամուսնութիւններ վիժած են մեր ուղեղի դադանախորշին մէջ, ու ո՛չ ոք տեղեկութիւն պիտի ունենայ, նոյն իսկ ենթակային կողմէ համակրալից բառ մը չուղղուած անոր որ այնքան յեղակարծ ու բուռն տպաւորութիւն մը գործած էր իր վրայ: Մենութեան ցուրտ սարսուռը զգացած կամ ժուժկալութեան տուայտանքը քաշած ատեննիդ կին մը կը տեսնէք, և ևհա մոռոլի կ'ըսէք իսկոյն. «Օ՛հ, ի՜նչ աղւոր ու սիրելի արարած մըն է. ինչո՞ւ համար իմ կինս չընեմ... և ընդ միշտ:» Տես լիբեւոյթը կ'անհետանայ, բայց ձեր յիշողութեան մէջ կրակէ դրոցով մը փորագրուած ու քանդակուած պիտի ըլլայ անիկա. միշտ ձեր աչքին առջեւ պիտի դայ գրքի մը էջերուն և գիշերուն երազներուն մէջ. վերջապէս ամենուրեք:

Եւ հա՛նա, քանի մը օր յետոյ՝ ոսկիով ու գեղեցիկ էակ մը կը տեսնէք փողոցին կամ սրահին մէջ, և իրականութիւնը ի գուր կը ջանայ պայքարել ձեր երեւակայութեան նկարած պատկերին հետ:

Անհամաձայնութիւնը կատարեալ կ'ըլլայ: Այդ կիներ առաջինը չէ ա'լ եւս, և դուք թերեւս կը ծիծաղիք ձեր խղճին լուսթեան մէջ երազուած սիրոյ բովանդակ խրախճանքին վրայ, գոչելով.

— Բայց ինչպէս կ'ըլլայ որ գեղեցիկ ու տենչալի դտայ այդ տափակ, անմխո ու անհրապոյր կիներ:

Մեծ անպատեհութիւն մը առաջ չգար ատկէ, եթէ երբեք փորձը կարճատեւ եղած է. բայց յաճախ բազմաթիւ այցելութիւններէ յետոյ կը պատահի այդ բանը, երբ մեր սիրտը, ինչպէս նաեւ մեր խօսքը տուած կ'ըլլանք արդէն:

Պէտք է համբերել և խոհեմութեամբ յառաջանալ:

* * *

Կը հարցնեմ հիմա մտովի. «Այն բոլոր տենչանքները զորս այրերն ու կիները իրարու հանդէպ կ'ունենան փողոցներու, սրահներու, թատրոններու մէջ, ո'ւր որ ալ հանդիպին իրարու, պարտի'ն վախճանի մը յանգիլ: Բայց աչքերու այդ շողարձակումները անանկ հուր մը կը պարունակեն որ անկարելի է չը մրկիլ անկէ. սրտի բոլոր այն թրթռումները, որոնք կը գունաւորեն դէմքը եւ իրարու կը մօտեցնեն երկու էակներ, երկու կեանքեր, ո'ւր կ'երթան, առանց բեղմնաւորելու երկիրը: Այդ երեւոյթները, արդիւնք մեր ուղեղին ու ջիւղերուն ամէնէն կնճռոտ և գերազանց մեքենականութեան, ինչ բանի կը կերպարանափոխուին, երբ առաջ չեն բերեր ո'չ խօսք, ո'չ տրտունջ, ո'չ հաճոյք, ո'չ յանցանք, ո'չ ամուսնութիւն և ո'չ ալ մեղք:

Եւ սակայն ո՞րքան բազմաթիւ են տենչանքները. գիշեր ցերեկ, քաղաքներու բազմամարդ փողոցներուն, սուրացող վազոններու յորձանքին, խուռն բազմութեան և լերանց մենաւոր արահեաներուն մէջ իրար կը խաչաձեւեն, անջրպետը կ'ակօսեն և եթէ կարենային, զիրար տեսնել՝ հորիզոնը ուղիւստէին, փոթորկի այն սաստիկ նշոյլներուն նման, որոնք արեւադարձային կլիմաներու ներքեւ առաջ կուգան:

* * *

Կին մը ընտրելու արուեստին մէջ ամէնէն տարրական ու կարեւոր սկզբունքներէն մէկն ալ կը համարուի սա բանը. չատ մը կիներ տեսնել՝ տակաւին ձեր անունը սիրտը ու կեանքը չտուած ձեռ նախընտրելիք կնոջ: Եթէ երբեք գիւղական անձուկ միջավայրի մը մէջ կը դառնուիք, ուրկէ դուրս չէք ելլեր բնաւ, և հոն ընտրած էք ձեր կեանքի ընդհանրահիւստ, կրնաք հպարտութիւն զգալ թէ մէկ երկվեցեակ աղջիկներու մէջ ամէնէն գեղանին ընտրած էք. բայց զգուշացէ՛ք երբ յանկարծ ուրիշ գիւղ մը երթաք,

և ևս ելլի դէշ՝ եթէ քաղաքի մը մէջ գտնուիք։ Յաւալի, պփգալի բաղդատութիւններ ընելու պիտի հարկադրուիք, և ատիկա է որ անդարմանելի կը դառնայ։

Ահա ինչո՞ւ համար մեծ մասամբ լաւ ամուսիններ կ'ըլլան այն մարդիկ որ շատ ճամբորդած են, իրենց ընտրութիւնը աւելի լայն խաբիսի մը վրայ կատարուելուն պատճառաւ աւելի մեծ բաղդ պիտի ունենան լաւ ընտրութիւն մը ընելու։ Մնաց որ, կիները աւելի դիւրաւ կը ներեն իրկնց թեկնածուներու անցեալ սիրային կեանքը քան թէ երկարատեւ անբժութիւն մը, ըստ այսմ՝ Տօն ժուան աւելի համակրելի կը թուի իրենց քան թէ զգաւտ Յովսէփ։

Կին մը իրաւունք ունի ինքզինքը հպարտ զգալու, երբ կը նախընտրուի այնպիսի մարդու մը կողմէ որ տեսած ու ճանչցած է հարիւր կամ հազար կին։ Չեմ գիտեր թէ բոլոր կիները համակարծիք են ինծի, բայց վստահ եմ որ սիրոյ գիտութեան մէջ տեղեակ եղողները իմ կարծիքէս են, իմ մասին, եթէ կին ըլլայի իտե՛ալ ամուսին մը պիտի նկատէի այն անձը որ ճամբորդած ըլլար աշխարհի վեց մասերուն մէջ, տեսած ըլլալով աշխարհի բոլոր կիները ու հիացած անոնց վրայ։

Անուրջս աւելի առաջ տանելով և կեանքի մակարդակին աւելի մօտեցնելով, ամուսնական թեկնածուի մը սիրոյն խորութեան վրայ կասկած մը ունենայի, այն ատեն պիտի ուզէի որ ճամբորդութիւն մը կատարարէր. եթէ, վերադարձին, իրեն արժանի գտներ զիս՝ ձեռքս պիտի տայի յօժարակամ, վստահ ըլլալով որ սիրազեղ ու հաւատարիմ ամուսին մը պիտի դառնար ան։

Ժամանակն ալ թանկագին ^{*} ^{*} ^{*} տարր մըն է՝ մեր ընտրութեան արժէքը որոշելու, լաւագոյն փորձաքարն է՝ ճշմարիտ սէրէն դանազանելու համար տարիանքին քմայքը, տարփական մարմաջը։

Հին առած մը, տիեզերական փորձառութեամբ հաստատուած, կ'ըսէ թէ ժամանակը կը պաղեցնէ կամ կը թօշնեցնէ տկար սէրերը, և կ'ամրապնդէ, կ'ուժովցնէ զօրաւոր սէրերը։

Մարդկային կեանքի կարճութիւնը և բովանդակ սիրահարներուն յատուկ եղող քնական անհամբերութիւնը իրարու հետ կը միաբանին, ամուսնութիւնները փութացնելու համար։ Այսուհանդերձ, պարտիմ այրելու և կիներուն խորհուրդ տալ որ համբերութեան պէս նուիրական տաքթիսութեան մը հետեւին, կը խնդրեմ և կը թախանձեմ այն կիներէն, որոնք սիրոյ (սովորական աւուժով) մէջ մենէ աւելի մարդավայել ընթացք մը ունին, հետեւիլ Ֆապիուս Բընթթաթուրի հնարազիտութեան, այսինքն ըստպատել, սպասել և միշտ սպասել։ Խնդիրը կը դառնայ կեանքի ամէնէն ծանրակշիւ և անագին հետեւանքներ ունեցող արարքի մը

վրայ. քանի մը ամսուան սպասումը ա՛լ աւելի արժանաւոր պիտի դարձնէ ընտրութիւնը, երաշխաւորելով ապագան:

Մեղրալուսինը այնքան աւելի երկար ատեն պիտի շողշողած մեր հորիզոնին վրայ, որքան համբերատարութեամբ սպասենք տենջանքին բանաստեղծութեան և յոյսին տեսլականութեան մէջ խորասոյզ:

Պ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Պ

Տ Ա Ր Ի Ք Ն Ո Ւ Ե Ր Ջ Ա Ն Կ Ո Ւ Յ Ի Ի Ն Ը

Եթէ երբեք սերնդագործող անասուն մը միայն ըլլար մարդ, տարիքի խնդիրը ամուսնութեան մէջ՝ շատ պարզ բան մը պիտի ըլլար և սա կանոնին մէջ պիտի ամփոփուէր.

Որքան ատեն որ էրիկ մարդ և կին կարողութիւն ունին արծարծելու կեանքի ջանք, կրնան ամուսնանալ. այսպէս, էրիկ մարդը կրնայ ամուսնանալ տասնըվեցէն մինչեւ վաթսուն տարեկանին, եւ ըացաւիկ պարագաներու մէջ՝ եօթանասունէն մինչեւ ութսուն, տասնըհինգամեայէն ուսեալ մինչեւ քառասունըհինգ տարեկան կնոջ հետ:

Բայց մարդ լոկ սերնդագործող անասուն մը չէ, այլ խորհող ու անտրամաբան, զգայուն, խորամանկ, իմաստակ էակ մը, առուտուրի, կրօնքի հետեւող կենդանի մը, որ սանձեր կը հնարէ՝ սերնդագործակոն նուիրական արշուածութիւնը մեղհացնելու համար իր սրարշաւ ընթացքին մէջ: Իմաստակութիւններ կը ստեղծէ՝ վիժեցնելու համար ճշմարտութիւնը, և շատ մը սուտեր կը յերկուրէ իբր հաճոյք. վերջապէս ամէնէն ճարտար ու հանճարեղ արուեստաւորն է տիեզերքի մէջ իր արտադրութեան արժէքը կոտրելու մասին:

Այս թանկագին առաքինութեանց պատճառու, տարիքի խնդիրը կը կնճռոտի մանաւանդ էրիկ մարդուն համար, երբ կ'ուզէ Եւայի աղջիկներէն մէկը ընտրել իբր ամուսին, ըսելու համար անոր. «կ'ուզե՞ս ինձի հետ ամուսնանալ, որպէս զի երկուքս միասին մեր ընտանեկան ապագային վրայ խորհինք քիչ մը»:

(Շարունակելի)

ՄԱԹԻՆՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Ն Ի Ն Ի Ի Ն Օ Ր Ա Գ Ի Ր Ը

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ

ՄԵՏՆԱԽՈՍՈՒՔԻՆ ԻՆ զՈՐ ԱԳՆՈՒՄԲԱՐ ԿՐ ՈՒԻ-
ՐԵՄ՝ ԵՆԳԵՎ, ՈՆԵՐԿԱՅ ԵՆ ԱՎԱՆՈՆԻ ԲՈՂՐ ԽԱՅ ԳՐԱ-
ԳԵՏՆԵՐՈՒՆ:

Վերջապէս...: Երեւակայեցէք... քիչ մնաց որ բոլոր կնո-
ջական ձեռնարկներս ապարդիւն մնային: Ես... ազնուական տիկին
մըն եմ: Կը խնդաք հէ՞... որովհետեւ տիկին ըսի ինքզինքիս...
բայց անտարակոյս... բոլոր ինծի պէս կիները կրնան տիկին ան-
ուանել ինքզինքնին...: Կ'ուզէք որ կնիկ ըսէի... Ինչ անախորժ
բառ...: Կեանքիս մէջ երբեք չի պիտի հանդուրժեմ որ ատանկ
անարգանք մը ընեն ինծի...:

Ամուսինս ազնուաշուք Ամբակում էֆէնտին որ Թաղ. Խորհրդ-
դոյ անդամ էր. անկէ ժառանգած եմ ազնուականութիւնս: Բնաւ,
որ մը «կնիկ» չէ ըսած ինծի... Աստուած ողորմի հոգուն, սքանչե-
լի մարդ էր...: Ազնուականութեան վաւերականութիւնը ձեզի
հաստատելէ ետք, կ'ըսէի թէ ազնուական եմ անանկ չէ՞...: Սա-
կայն ժամը քանի՞ն է... հինգին շոգեկառքին պէտք է հասնիմ...:

Ինչ մը հանգչիմ, տակաւին երեք ժամ ունինք: Տեսնաք ինչ
անուշ է բարիք ընելը... ասով ճիշտ քսան աղջիկ ամուսնա-
ցուցի, ամէնքն ալ առանց դրամոժիտի...: Սակայն այս վերջինը,
սարսափելի տղայ մը, Երուանդը, կը ձանձնա՞ք անանկ չէ. Դուռն-
եան ազնուական ընտանիքին վերջին շառաւիղը...: Անապարան-
քիս մէջ ձեռնոցս պիտի կորսնցնէի, սա ձեռնոցս, էլիօդրօքի պու-
քէով լուրումնաւէտութեամբ, ճիշտ մէկուկէս ոսկի առած եմ, մէկ ու
կէս... արդեօք, բայց ըսէք, մէկ ու կէս ըսի՞, ոչ կարծեմ ճիշտ
գինը կէս ոսկի է, աւելի պակաս է՞ր, նայիմ, կարծեմ Ամբակում
էֆէնտին հետ նշանուած ատենս էր որ մայրս տասնըջորս դուրուշի
առաւ: Տասնըջորս դուրո՞ւշ, անկարելի է, ես, ազնուական տիկին
մը հարկաւ չէք հաւտար որ տասնըջորս դուրուշի ձեռնոց կը դնեմ:
Իրաւ է որ երեք հազար ոսկի դրամաժիտ տուի, սակայն լուսահո-
գի մայրս շատ խնայատէր տիկին մըն էր:

Բայց ինչ ձայն է որ կը լսեմ, շոգեկառքն է, կը սուլէ կոր, արդ-
եօք ժամը հինգն է որ, ըսէք, շո՛ւտ չ'փախցնեմ շոգեկառքը, շո՛ւտ,
շո՛ւտ, որովհետեւ շատ դորձեր ունիմ կարգադրելիք: Լուսոցարա-
բուհիս պիտի կանչել տամ, մեծ լուացք ունինք, սպասուհիներէս
Մարիամը պիտի ձամբեմ, վարպետիս ամսականը պիտի պակսեցը-
նեմ, անպիտանը, պիտի տեսնայ անկկա: Ինձմէ դաղանի ամէն օր

հաւկիթ մը կ'ուտէ եղեր, սարսափելի է, մինչդեռ ես միամտաբար լուրիս եփել կուտայի իրենց համար մասնաւորաբար:

Երեւակայեցեք, անցեալ օր հարբուխէն ձայնս մարած էր, աղուոր ձայն մը ունիմ, Ամբակում աղայիս ալ ձայնը շատ շատ գեղեցիկ էր, թաղականութեան օրով տիրացուներուն հետ շապիկ կը հագնէր, հիմակ աշխարհք հակառակը դարձեր է, աղջիկները շապիկ հագնին, տիրացու ըլլան, կ'երեւայ թէ քանի մը օրէն ալ վարդապետները ժամկէտները կնիկ պիտի ըլլան: Ձայնս մարած էր չէ՛. վարպետիս լուր զրկեցի որ՝ երեք օր թարմ հաւկիթ զրկէ թող վեր... պիտի կլլէի որ սիրտս բացուէր, տաքաւաւոր որ եփած կերակուրներուն աղէկ միսերը կ'ուտէ եղեր, ինչ կուղէք որ ըսէ, «Տիկին, հաւերը չեն ածեր կոր» ա՛յ... ահուկի...: Եւ ես որ այնքան բարի եմ... ես որ ծառաներուս համար ամէն օր լուրիս եփել կուտամ... ես տակաւին երեք օր առաջ Ամբակում էֆէնս ախլա կօշիկները տուի նոր... նոր... չորս կարկտան ունէր դեռ... հաւտայի այդ անշնորհքին խօսքին... տակաւին ըրած ղեղծումը չի պիտի գիտնայի եթէ Մարիամը՝ որ հետը կուռուտ է լուր չի տար ինծի...:

Երեք օր ձայնս քաշուած մնաց... դիւրին չկարծէք... էօ... էօ... էօ... կը խօսէի կոր...: Հաւկիթներս ուտէ... պիտի տեսնայ...: Ամբար երեսուն օրէն... չէ երեսունը երկու օրէն կ'ընէ երեսուն երկու հաւկիթ... տասնըվեց վարայէն մէկ հաւկիթը կ'ընէ հինգ զուրուշ... չէ՛... տասը... ոչ... ոչ... քսանըհինգ զուրուշ... քսանըհինգ զուրուշ պիտի պակսեցնեմ ամսականէն... տուած կօշիկներս ալ ես պիտի առնեմ... թող տեսնայ տիկինը խաբելը...: Ձայնս քաշուած մնաց երեք օր, սարսափելի է պարզապէս, քսան զուրուշ ըփշկին տուի, տասը զուրուշ ալ դեղի եղաւ երեսուն... մինչդեռ եթէ անպիտան խոհարարս զիս չխաբեր, եթէ հաւկիթներս չուտէր, ասպնջովաբար երեք հաւկիթով ազատած պիտի ըլլայի, այս երեսուն զուրուշն ալ վար պիտի դնեմ, կ'ընէ յիսունըհինգ, հինգ զուրուշ ալ միսին աղէկ կտորները կերած ըլլալուն համար ըրաւ վաթսուն, մնացածը կուտամ:

Սա ծառաները անտանելի են պարզապէս... Էքքաձաձա չմընաց... մտածել որ Մարիամն ալ իրեն միացած զիս կը կողոպտեն կոր եղեր...: Սա իրիկուն շողեկաւքէն վար իջածիս պէն Մարիամը պիտի ճամբեմ... անցեալ օր հարսնութենէս մնացած դեղին հագուստ մը ունէի... իրաւ է որ ցեցերը կերած էին բայց տակաւին նոր էր... լացաւ... աղաչեց... և ես որ այնքան ըտիս սիրտ եմ... ես... որ ծառաներուս համար մասնաւոր կերակուր եփել կուտամ... որպէս զի իմ կերակուրներէս չուտեն... ունե-

ցածս... չունեցածս ծառաներուս կուտամ... ան ալ իրեն տուի... հետն ալ զոյգ մը գուլպայ... աղէկ ֆիլ. քեֆօս... տակաւին հինգ անգամ կարկանդակ էր... հապա մեծ մօրմէս մնացած չա՛րը... ան ալ անոր տուի... Ասանկ բարիքներ ընեմ... հազուադէպս իտալիացի գուլպան... աղէկ տեսաի... չալս... և ի՞նչ... ասպետ ըստուր... վարպետին հետ զիս կողոպտեն... հաւկիթներս ուտեն... ետքէն ալ «Տիկին, հաւերը չին ամեր կոր» ըսեն հա՛... անց եալ օր ալ մառանէն չորս նարինջ երկու խնձոր պակսած էր... անպատճառ վարպետը և Մարիամը կերած են... «Աս ի՞նչ է Մարիամ նարինջները պակսեր են» կ'ըսեմ նէ «Մուկերը կերած ըլլալու են» կը պատասխանէ... ա՛յ սարսափելի:

Մէկը հաւերը չին ամեր կ'ըսէ, միւսը մուկերը կերեր են կը պատասխանէ... զիս մօխիւրի վրայ նստեցնելու միտք ունին... զիս պիտի կողոպտեն... պայուսակս հետս առի որ ան ալ մուկերուն չ'կերցնեն... սա պայուսակս... կը տեսնէ՞ք... պայուսակս... ո՛ւր է... հո՞ս... գոհարեղէններուս պայուսակը... հիմակ հոս էր... պայուսակը գոհարեղէններուս... տեսա՞ք... արդեօք Մարիամը գողցա՞ւ... մուկերուն տուաւ... վարպետը անած ըլլալու է... սակայն հետս առի... աղէկ գիտեմ... քովս էր քիչ մը առաջ... արդեօք գո՞ւք առիք, ինչո՞ւ կը ծիծաղիք... պայուսակս չի կայ... հինգ հարիւր ոսկիի գոհարեղէն ունի մէջը... սանկ մատանի մը... քառակուսի ձեւով... բայց պայուսակս... տեսաք չէ՞... սա ձեւով... գորշ... հէ՞... չէ մանիլակագոյն... ո՛չ... կարծեմ սեւ էր... այո՛, այո՛, սեւ էր, Ամբակում էֆէնտին առած էր, Աստուած ողորմի հողուն, մէջը օղ մը ունէի նշանտուգիս օրը բերած էր, քիչ մը առաջ տակաւին քովս էր, ձեռքովս չօշափեցի, մէջէն թաշկինակ մը առի, տեսա՞ք սնանկ չէ՞, եզերքը պռօտէ բանուած թաշկինակ մը մէկ ծայրին վրայ ժամգի բիծով մը, անպիտան լուացարարուհիս ըրեր է: Սմէնքն ալ ինծի հակառակ են, արդեօք Մարիամը հո՞ս էր, ան գողցա՞ւ կ'ըսէք, բայց ինտոր ըրաւ որ չտեսայ, տունը մոռցայ կ'ըսէի, այն ատեն, Մարիամը և վարպետը մէջերնին բաժնած ըլլալու են, հիմա՞կ, ինչ դժբաղդութիւն, ահուելի է, խելքս պիտի կորսնցնեմ, արդեօք տեսա՞ք, հոս էր կարծես թէ, սանկ կապոյտ, ոչ, դեղին, այո, դեղին գոյնով պայուսակ մը, ռակեգոյն չղթայով մը, քիչ մը մաշած, ճամբան ձգեցի կ'ըսէք, ես որ այնքան բարիք ըրած եմ պէ՞տք էր որ այս փորձանքը զլիւռու դար, ես որ երեսուն աղջիկ ամուսնացուցի առանց դրամօժիտի, անցեալ օր ալ Դիւնաւաններուն տղան երկու հազար ոսկիով աղջկան մը տուի, իմ չնորհիւս դերձակին, կօշկակարներուն դիզուած պարտքերը վճարեց, հիմակ կառքով կը

պատի, հագուստները Միւրին կարել կուտայ, Բիքմալիճնին մէկ ուսկինոց փողկապները կը գործածէ, մետաքս գուլպայ կը հագնի, ո՞ր մէկը ըսեմ այնքան բարիք ըրած եմ ուրիշներուն, ապերախոր, անցեալ օր ինծի եկած էր, ի՞նչ կ'ուզէք որ ըսէ, կը վայելէ՞ եղեր որ ծառաներու լուրիս կերցնեմ, լուրիային չի հաւնիր կոր հի'... հի'... հի'... իրեն ի՞նչ, ուղեմ նէ անօթի կը պահեմ, անպիտանը, լուրիս կը կերցնեմ եղեր, սառնիճի ջուր կը խմցնեմ եղեր, հապա պարոնը կ'ուզէ եղեր որ Թոգաթլեանէն բերել տամ ծառաներու ճաշը, պարոնը կը փախաքի եղեր որ, ջուրին տեղ կաթ խմցնեմ ծառաներու ու ես լուրիս ուտեմ, ես սառնիճի ջուր խմեմ. անշուշտ իր երկրորդ այցելութեամբ պարոնը պիտի փախաքի որ խոհարարիս հագուստները Միւրին կարել տամ, Մարիամիճններն ալ Լշրիկէլին, հի', հի', հի', ի՞նչ ձայն է, շողեկառքն էր սուղողը, հէ՛, պայուսակս, շուտ, ժամը տասը կա՞յ, պայուսակս, պայուսակս, բօւղ-մօնէս, ալէսըղուս տոմսակս, մէջն էր, պայուսակիս, Թաշկինակս, գոհարեղէններս, Մարիամը գողցած ըլլալու է, վարպետը այսօր ալ հաւերուն հաւկիթները կերած ըլլալու է, անգամ մը տուն հասնիմ, եկաւ, կուգայ կոր, շողեկառքը, տոմսակս, ո՞ւր էր, ո՞ւր գնաց, բայց, սարսափելի, հոս էր, պայուսակիս մէջը, տեսայ քիչ մը առաջ, աչքիս հանդիպեցաւ, դուք ալ նշմարեցիք, անանկ չէ՞, դեղին, ոչ սեւ, պայուսակ մը այդ սեւ, քիչ մը մաշած, հոս էր հիմակ. ա՛յ սարսափելի ձեռքէս կախուած է եղեր, եւ այնքան ատեն փնտուցի:

Ն Ի Ն Ի

ԲԵՐԱՅԻ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՅԸ

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ Բերայի Պատ. Թաղ. Խորհուրդը համաձայնելով Արուեստանոցի վարչութիւններուն հետ և գնահատելով անոնց ձեռնհասութիւնը այդ բաղձապահանջ ու կարեւոր գործին մէջ, վերստին անոնց յանձնած է Արուեստանոցի վարչութիւնը, և վարչական նոյն համակրելի մարմինը կը շարունակէ օգտակար գործունէութեան արդիւնաւոր շրջան մը ձեռք առնել նորէն, որուն համար կը փութանք մեր խնդակցութիւնը յայտնել:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ դիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

Հայրաթիւ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ The Singer Manufacturing Co՝
մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելա-
գործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բո-
լանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն

մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան
վաճառատանց մէջ՝

- | | | |
|---------|---|---|
| ԲԵՐԱ | { | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | { | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | { | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | { | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13 |
| ՍԵՐԻՏԱՐ | | Չարչը Պոյու, Թ. 120. |

ԽԱՐԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւեստորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզզուլուի տունը:
10—50

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Լ Է Օ Ն Ն. Ֆ Ռ Ա Ն Ճ Ի

ԿԱԼԱԹԱ, ՎՕՅՎՕՏԱ ՓՈՂՈՑ ԹԻԻ 128

ԹՐԱՄՈՒԷՅԻ ՍԹԱՍԻՕՆԻՆ ԴԷՄ

Հանդերձեղինաց այս վաճառատունը որ համըսաւոր եղած է
իր ապրանքներուն աժանութեան և անկունութեանը համար, այս
անգամ նոր մթերքով մը ճոխացուցած է իր վաճառատունը, ուր
կը ծախուին այրերու, կիներու և տղայոց յատուկ պատրաստ
զգեստներ և ուր հափի վրայ յանձնարարութիւններ կ'առնուին,
կատարելապէս գոհագրելու պայմանաւ իրեն դիմողները: 1—10

Կ Օ Շ Ի Կ Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն
Տ. Զ. ԲՕԼԱՔ ԵՒ ԸՆԿ.

Հ Ի Մ Ն ՈՒ Ա Մ 1860 ի ն

Գրեթէ կէս դարէ ի վեր հանրութեան վստահութիւնը գրաւած
կօշիկի եւրոպական այս մեծ գործարանը՝ որուն գլխաւոր միջերա-
նոցն է

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ ԹԻԻ 401

կը հայթայթէ արանց, կանանց և տղայոց յատուկ զանազան տե-
սակ կօշիկներ որոնք իրենց շիջութեամբ և տոկունութեամբ կը
գերազանցեն միւս նմանօրինակ վաճառատանց ապրանքները:

Անգամ մը դիմել բաւական է գոհ մնալու համար: 1—12

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԻԿ Վ Ա Ճ Ա Ռ ՈՒ Մ

Հէրճայի վաճառատունը՝ գոհարեղէններու, ոսկի և արծաթ
շղթաներու, գրպանի, պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր
վաճառումէն զատ, իր բաղաժաթիւ յաճախորդներուն վստահութե-
նէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ա-
մէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ
ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստ-
ներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ձերմակե-
ղէններ, ֆանթէղիներ և թօաֆիէներ ու ամերիկեան կօշիկներ:
Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւ-
րոպական ու անգլիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօ-
ֆօններ ու լպիսիքլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Այս ամէնուն որոշեալ տրոժէքին վաճառումն է

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ.

Միայն թէ զնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ
մնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ
պատրաստ է հայթայթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵՍ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՍ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 գեղջ

Սակարկութիւն չկայ

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

1—10